

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկա 12... 30.
Վեցամսեայ 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան... 14 30.


Վեցամսեայ... 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "

ԿԱՆԻՍԻԿ

Մանուցման տողը
20 տակիւ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ԶՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԻ

Rédaction du ournal

"Иправосудіе"

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

"Ігравосудіе"

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրոշիր

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ մեր յարգոյ բաժանորդներէն որ հաճին իրենց բաժնեգրները զրկել ընդ փոյթ :
Անցեալ տարուէն չ'պարտք ունեցողներուն անունները պիտի հրատարակենք եւ թերթերուն առաջումը պիտի դադրեցնենք :

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԸ

Միութենականները գործունէութեան մէջ են : Նրանց Բ. պատգամաւորական ժողովը, որ մօտեցաւ տեղի ունեցաւ, թուում է որ ապագային նիստեր չ'են ունեցած : Թուում է որ նա տուած լինի յեղափոխական տեսակէտից՝ կարեւոր որոշումներ : Այդ որոշումներէն արդիւնք են անշուշտ վերջերս նրանց կողմից միմեանց ետեւից հրապարակ հանուած իրենց կազմակերպութեան տըպագրուած Մրազիրը եւ Հայ ժողովրդին ուղղուած Կոչը :

Մրազիր հրատարակութիւնը աւելի քան անհրաժեշտ էր Հարկաւոր էր որ ժողովուրդը աւելի մօտիկ ճանաչէր Յեղափոխական մի կազմակերպութիւն, որի գոյութիւնը, որպէս առանձին մարմին, որպէս պառնձին կուսակցութիւն, իւր որոշ նպատակով, իւր որոշ ուղղութեամբ ու կազմակերպութեամբ, շօշափում է արդէն երեք տարուա շրջան : Առաւել եւս որ գտնուեցան, եւ դեռ գտնուում են անշուշտ, մինչեւ իսկ Յեղափոխականներ, որոնք յայտնեցան տգէտ, առտեղեակ նրանց նպատակներին, ուղղութեան եւ կազմակերպութեան : դեռ չենք խօսում ուրիշներէ մասին, որոնք ուղեցին կարծել տալ թէ Միութենականները եւ ոչ իսկ յեղափոխականներ էին : Տպագրուած ժրագիրը եկաւ միանգամից վերջ դնելու ամեն տեսակ անհիմն ու սխալ կարծիքներէ, ենթադրութիւններէ ու կամայական մեկնարանութիւններէ : Մրազիրը շատ պարզ, շատ որոշ երեւում է որ

Միութենականները «Հայ Յեղ. Միութիւն» անուան տակ Յեղափոխական մի կազմակերպութիւն են, ունենալով իրենց զոյաութեան հիմք նոյն այն նպատակը, որը դրած են իրենց միւս երեք Յեղափոխական մարմինները, այն է՝ Տաճկահայաստանի ազատութիւնը Օսմանեան բռնապետութեան լծից : Այդ նպատակը իրագործելու համար, սակայն, Միութենականները անհրաժեշտ են գտնում անշուշտ կուսակցութիւններէ ի մի միացումը : Դժնելով այս վերջինը իրենց անմիջական նպատակ եւ մինչեւ այդ լինելը, հաւաքելով իրենց շուրջը որքան կարելի է յեղափոխական մեծ ոյթեր՝ դնելու համար նրանց, միացած պարագային՝ Ընդհանուր Միութեան տրամադրութեան տակ :

Շատ պարզ եւ շատ որոշ է նմանապէս որ Միութենական մարմինը իւր որոշ նպատակներով ու կազմակերպութեամբ է, ոչ աւելի ոչ պակաս, մի առանձին Յեղափոխական կուսակցութիւն, հանդէպ միւս Հայ Յեղ. կուսակցութիւններին : Որքան էլ իրենք զգուշանան եւ չուզեն իրենց վերայ առնել այդ անունը, վախենալով թէ մի՞ գուցէ խճուղած լինին յեղափոխական հրապարակը նոր կուսակցութեան գոյութեամբ, որքան էլ ուրիշներէ տարբեր կուսակցութիւններէ, միեւնոյն կամ տարբեր նկատումներով մերժեն նրանց այդ անունը, իրականութիւնը սակայն ոչնչով չ'է փոխուում : Ինչպէս ուզում են թող նային նրա վերայ. իրողութիւնը այն է որ Հայ Յեղափոխական Միութիւնը մի առանձին կուսակցութիւն է իւր որոշ ուղղութեամբ ու որոշ գործունէութեամբ՝ յեղափոխական այլ կուսակցութիւնների շարքում եւ նրանց վերաբերմամբ : Խնդիրը անուան մէջ չէ, այլ իրողութեան :

Ներկայ յօդուածում նպատակ չունինք խօսիլ այն բանի մասին թէ ո՞րքան նպատակայարմար է եղած այդպիսի ժրագրի վերայ

մի առանձին մարմնի կազմուիլը, բայց որ Միութենականների անմիջական նպատակը, այն է՝ բոլոր Հայ յեղափոխական մարմինների ի մի միացումը ընդդէմ ընդհանուր թշնամուն, վերին ծայր համակրելի մի միտք է եւ ամեն կերպով համապատասխան ընդհանուր Հայ ժողովրդի իսկական ցանկութեան՝ այդ մասին որ եւ տարակուս ներելի չէ կարելի համարել :

Այսքան ծրագրի մասին : Ինչ վերաբերում է Կոչին՝ մենք միայն շնորհաւորութիւն ունենք յայտնելու Միութենականներին :

Առաջին անգամը չէ որ Միութենականները միութեան հրաւեր են կարդում ընդհանուր Հայ ժողովրդին եւ Հայ յեղափոխական կուսակցութիւններին : 1901 թուականի սեպտ. 28 ին նրանք դուրս են հանել մի շրջաբերական, ուղղուած ընդհանրապէս Հայ եղբայրներին, իսկ 1902 յունվար 22 ին մի բաց նամակ՝ ուղղուած ուղղակի Հայ յեղափոխական մարմիններին : Այդ երկու գրութիւնների մէջ, հաւաստապէս եւ միօրինակաբար, Միութենականները աշխատում են արժարծել Միութեան յօդին ընդհանուր հայութեան մէջ եւ հրաւիրում են յեղափոխական մարմիններին՝ միանալ ընդհանուր նպատակի շուրջը :

Ներկայ Կոչը, պահպանելով միեւնոյն ոգին, միեւնոյն ձեւատուով՝ միութեան վերածելու անշուշտ կուսակցութիւնները, տարբերում է սակայն նրանցից, զգալի կերպով, իւր բովանդակութեամբ :

Նախ եւ առաջ, այնտեղ մենք նկարագրուած ու ցուցադրուած ենք տեսնում, իսկական գոյնելով, այն կրիտիկական դրութիւնը, որի մէջ գտնուում է ընդհանուր Հայ Այդդ ներկայ հանգամանքներում : Այնտեղ ճշգրտութեամբ գուրս բերուած ենք գրութիւնը, դրանից յետոյ, մասնաւորապէս Հայ յեղափոխական շարժման ամենաանմխիթար կացու-

թիւնը՝ հանդէպ ընդհանուր ազգային ճգնաժամին : Միութենական Կոչը, վեր հանելով այդ երկու տխուր կացութեան վտանգաւոր հանգամանքը՝ դնում է, որպէս դարձան այդ կացութեան, Հայ յեղափոխական կուսակցութիւնների ընդհանուր միութիւնը :

Միանգամայն կարելի է ուրախ լինել տեսնելով թէ ո՞րպիսի մտահոգութեամբ ու շեշտով քանիցս գալիս են Միութենականները իրենց այդ Կոչի մէջ ուղղել եւ սեւեռել տալ հայկական մտքերը ընդհանրապէս, Հայ յեղափոխական մարքերը մասնաւորապէս, այն գաղափարի վերայ թէ Տաճկահայաստանի ազատութեան հարցն է որ միակը կարող է եւ պէտք է ստանայ իւր լուծումը՝ ընդհանուր ազգի բոլոր մասերի անխտիր մասնակցութեամբ, որ Հայ յեղափոխական կազմակերպութիւնները այդ հարցը ունենալով իրենց սկզբնական նպատակ, նոյն այդ հարցի վերայ էլ պէտք է մնան, մինչեւ նրա յաջողութեամբ լուծուիլը եւ որ նրա հետ միասին զուգընթացաբար տանիլ ուրիշ որեւէ խնդիր, լինի՝ բանւորական դատակարգային խնդիր, լինի՝ նոյն իսկ Կովկասահայ ազատութեան խնդիր, բացի ամեն ինչ վիժել տալուց ուրիշ արգիւնքի չէ կարող յանգեցնել : Եւ այդ՝ այն գերազանց պատճառով որ անկարելի է եւ յիմարութիւն է միանգամայն հայկական փոքրիկ, աննշան ոյթերը բաժանել ցրուել քառասուն տեղի վերայ, — մի տակտիկ, որի հետեւանքը ուրիշ բան չէ կարող լինել, բայց թէ իսպառ սեփական խորտակում, ոչնչացում :

Կոչը մասնաւորապէս հարկաւոր է համարել կանգ առնել սօսիալիստական հոսանքի վերայ, որոնց իսկ սխալ ըմբռնուած, սըխալ մեկնաբանուած եւ Կովկասահայ կեանքում մանաւանդ հող գտած, հեռացնում է, հետզհետեւ աւելի մեծ չափերով, կարեւոր ոյթեր բռնել նպատակից : Այդ հոսանքի առաջնորդներին նրանց

հետեւողներին համարում է «մոլորածներ», որոնք մի կողմ թողած կենդանի գործը, ընդհանուր հայութեան համար կենքի և մահուան կարեւորութիւն ունեցող անմիջական հարցը—Տաճկահայաստանի Աղատութեան հարցը—զբաղւում են համարակալին Հայրենիքի ստեղծման հարցերով...

Խօսքը, ի հարկէ, չէ վերաբերում ուղղակի և անմիջական սօսիալիստական և առհասարակ համարակալին հեռուոր, մառախուղային, անօր գաղափարներին ներքին էութեան, ներքին արժէքին։ Ինչ որ էլ լինի այդ մասին մեղանից իւրաքանչիւրի անհատական կարծիքը, անկարելի է չտեսնել, չընդունել, չխոստովանել որ այն ժամանակ, երբ ընդհանուր հայութեան առաջ գործած է Ազգային գոյութեան, ազգային սեփական ազատ տան հիմնադրութեան հարցը, փնտրակար է միանգամայն ծրարուիլ, փաթաթուիլ ամպերի մէջ, մոռնալով ազգային տարրական պարտականութիւններ...

Մենք առիթ ունեցած ենք ասելու և կրկնելու որ ներկայ հայկական կեանքի պայմաններում անկարելի է, աննպատակաբար մար է հիմնական հարցը, փնտրակար է հիմնական սօսիալիստական կուսակցութիւններ։ Այդ մասին մօտիկ յեղափոխական անցնալի փաստերը, եղած փորձերը, աւելի քան բաւական են հաստատելու այդ ճշմարտութիւնը։ Եթէ հիմնութիւն իսկ այդպիսի մարմիններ, նրանք չեն կարող, առանց ազգայնապէս պարտազանց գտնուելու, պահպանել իրենց ինքնուրոյն, անջատ գործունէութիւնը։ Իսկ երկու նպատակ միանգամայն և միասին դնել և տանիլ հակասական է և ցնորական։ Այդպիսի գաղափարներ, տրուած պայմաններում, մեզ համար միայն անհատական տիրապետութեան կարող են պատկանիլ և ոչ հասարակական։

Կոչը վերջանում է ուժեղ և կորովի հրաւերով ուղղուած Հայ Յեղափոխական կուսակցութիւններին՝ միանալու ընդհանուր նպատակի, Տաճկահայաստանի ազատութեան շուրջը, վերջ տալով իրենց ներքին աննպատակ և փնտրակար բաժանումներին ու կոխերներին։

Միութենականների Կոչը թողնում է ընթերցող հայի վերայ առողջ, գրական և շինող տպաւորութիւն։ Ուստի և ցանկալի է որ նա տարածուի, որքան կարելի է շատ, հայութեան ամեն տեղի և ամեն տեսակի խաւերի մէջ։

Հմայեալ Խոչարդեան

Ն Ա Մ Ա Կ Մ Ո Ւ Շ Է Ն

Մուշ 21 յունվար

Ձմեռուան միջոցին կառավարութիւնը բազմապատկեց իր բռնութիւնները ու հարստահարութիւնները Հայոց դէմ։ Պաշտօնեաները իրենց գործած բռնութիւններուն օրինական ձեւ մը տալու համար ստութեան կը դիմեն. այսպէս վերջերս տարածայնեցին թէ Մշոյ դաշտի հայերը իրենց բոլորը ինչքը կը ծախեն իրենց զէնք հայթայթելու համար։ Կառավարութիւնը ինքն ալ հաւատաց իր տարածած սուտին և ստիկանութեան գօմիսէր Հիւսիսի դաշտ շրջակայքէն գործը քննելու համար։ Հիւսիսի այցելեց զլիաւոր գիւղերը և քննական երկար պտոյտէ մը յետոյ ոչ մէկ ապացոյց չը կրցաւ գտնել։ Մուշ վերադարձին, չը թերեցաւ յայտարարել իր տեղեկագրով թէ Հայերը կը զինուին։

Հիմակ կառավարութիւնը կը պատրաստուի խուզարկութիւններ կատարել տալու դաշտի գիւղերուն մէջ, որմէ կարելի է ենթադրել թէ շուտով նոր խուզարկութիւններ պիտի գործուին, երբէք չէ եղած որ խուզարկութիւնները տեղի ունենան առանց ծեծի, առանց տանջանքի, առանց բռնարարութեան, գողութեան, աւերումի և առանց սպանութիւններու։

Թուրք ամբոյն ալ շատ գրեգուռած է Սասունի ֆէտայիներուն խաղաղ յաղթանակին պատճառաւ։ Շատ հեռագիրներ տրուեցան Կ. Պօլիս արտօնութիւն ստանալու համար գերագոյն միջոցը գործածելու համար, այսինքն ջարդելու հրամանը եկաւ, բայց պատուիրելով որ մինչեւ գարուն սպասեն։ Ուստի գարունին է որ մեծ հարուածը պիտի տրուի։ Բայց տարածուող չշուկները և կառավարութեան գործերը կանխատեսել կուտան թէ աւելի կանուխ պիտի սկսին, եթէ կարելի ըլլայ Պալիսէն հրաման բերել տալ, ինչպէս ամէն օր հիւսագրաւ կը խնդրուի, անմիջապէս գործողութեան սկսելու։

Ծրագրուած կոտորածը արդարացնելու համար զինուորական հրամանատարը ուրիշ սուտ մըն ալ տարածեց, թէ ֆէտայիները Սասունէն դաշտ իջած ըլլան թուրք զօրաց վրայ յարձակելու, և իր յերիւրանքին աւելի կշիռ տալու համար դաշտին բոլոր գիւղերուն մէջ ցրուած զինուորները համախմբեց Խալքէօյ, Սուլուի Ղարնէն, Նորչէն և Արաչ։ Անկէ իվել այն հինգ գիւղերը պաշարման վիճակի մէջ են։ Հայ գիւղացիները իրաւունք չունին միթնելէ յետոյ տուններէն դուրս

ելնելու։ Բայց թուրք զինուորները ազատ կը պտուրին ամէն ժամ, տունները կը մտնեն, կը գողնան և կիներ կը բռնաբարեն։

Սուլուի բնակիչները գանգատեցան փաշային. սա անոնց խտրութեամբ պատասխանեց. «Կորսուեցէ՛ք, եթէ ատոր չէք դիմանար կրնաք գաղթել»։

ԼԷՐՕՐԷՆ

Պ Ո Ւ Լ Կ Ո Ւ Լ

Պ. ՆԱՅԷՎԻՉ ԵՒ ԴՈՒՌԷ

Պ. Նայէվիչ, որուն իշխանը եւ պուլկարական կառավարութիւնը, քանի մը շարաթ առաջ, կրկին անգամ պաշտօն յանձնեցին Դրան հետ բանակցութեան մասին «Պալքանկերու մէջ բարեկարգութիւնը և խաղաղութիւնը պահպանելու» և բարենորոգման գործը խափանելու բնոյթ ունեցող ամեն ինչ մէկուսելու համար, հիմա իր պաշտօնն յաղորդեցաւ ի գլուխ հանած ըլլալ կը հռչակէ ինչպէս զինքը։ Իր շնորհիւ, Թուրքո-Պուլկարական համաձայնութեան նախապայմանները ստորագրուած են, կըսուի։ Եւ երկուք զէջքին մէջ, ուր պաշտօնապէս վար դրուեցաւ, նախաձեռն մը յետոյ Սուլուիսին շրջորեւրը համոզած է եղեր այն «անհաճութեան քաղաքականութեան» մասին, որուն պիտի սկսէին յետ այսորիկ Սօֆիայի մէջ՝ այն պարագային որ Թուրքիան հաւանէր բանակցել Պուլկարի ղեկավարութեան նկատմամբ։

Պ. Նայէվիչ Աւստրո-Հունգարիոյ և Թուրքիոյ զինպանատանց բացայայտ հաւատարմութիւններ տուած է եղեր Պուլկարիոյ ընթացքին մասին։ Այս նկատմամբ ասոր մնապէս օգնել է Կերմանիոյ գեսպանը, որ փութաց անձամբ ապահովել Սուլուիսին Սօֆիայի կառավարական խորհուրդներուն ինչպէս նաեւ Մակեդոնիոյ մէջ տրուող խաղաղասիրական միտումներուն մասին։

Կը թուի որ Ֆէրոյնանտ իշխանը անձնապէս իրատ մեծ գործակցութիւն մը ունի այս ուղղութեան մէջ զէպի գերմանական գիւնապետութիւնը (կամ այսպէս ըսնք, այդ գիւնապետութեան աղքատութեան տակ մտնելուն մէջ)։ Այս նկատմամբ պերճաբար նշանակ մըն է Կերմանիոյ Կայսեր կողմէն կարմիր Արծուի շնորհումը Պօլիս իշխանին։

Ահա այս տեսակ եղելութիւններով է որ Արեւմուտքի մէջ, կը փորձեն բացատրել թէ Պուլկարիներ և Թուրքերը պիտի յաջողին վերջնականապէս համաձայնութեան մը յանգիլ։

Բայց եղելութեանց իրականութիւնը այդպէս չէ բնաւ։

Մէկդի ձգելու նախ եւ առաջ թէ կիցում Բ. ի սիրելիութիւնները զէպի Ֆէրոյնանտ իշխանի որդին (գահաժառանգ Պօլիս իշխանը որ հաղիւ կը թեւակոխէ իր տաններէն տարին) հանգերձեալ են լոկ ըստ կարելւոյն Սուլուիսին մատուցութիւնները թմրեցունելու։

Բայց Պուլկարիսն ալ, Թուրքիոյ պէս անհոգ չգտնուի զինուորական պատրաստութեանց մասին։

Ըսուեցաւ որ պուլկար կառավարութեան ձեռք առած առաջին միջոցն և դաւ հրաման տալ հեռացնելու փախստականները թաւը սահմանադրւոյն մօտիկ քաղաքներէն, եւ արգելել,

ամենամեծ չափով ձեռք առնուած հակողութեան միջոցներով, որպէսզի օր ըստ օրէ աճող ապստամբաբուսները չանցնին։

Հիմա գիտենք որ այս տեսակ մը պաշարման վիճակը Մակեդոնիոյ եւ Թրակիոյ սահմանակից գաւառաց մէջ յայտարարուեցաւ աւելի քան իսկ զինուորական քան թէ գիւնապետական պատճառներով։ Պատերազմական նախարարութեան մէկ հրամանագիրը ամբողջ Թուրքական սահմանագլուխը չորս հատուածներու կը բաժնէ։ Երկուք մէջ քաղաքային պաշտօնատարները ըտրուրվին ստորադասեալ են զինուորական հատուածակներուն։ Այն նոր զօրքերը որ յառաջիկայ տարւոյ յունուարին դրօշը տակ պիտի կանչուին, այս ամիս ժողովեցին։ Այս պիտով գործուն բանակը դեռ տասն հազար մարդով կաւենայ։

Բոլոր այս պատրաստութիւնները հանգեցնելու չեն ուժ տալու այն պարագայէն ձեռք համար եղած յանձնառութեանը, զոր կըսեն թէ, Պ. Նայէվիչ արդէն կը քած է, այլ քի խալիսիւրու համար Դրան բանակներուն կեդրոնացումը Մակեդոնիոյ եւ մասնաւորապէս Անդրինուպոլսեան նահանգին մէջ։

Թօփիսանէնի գործարանները իրօք զբաղած են ամենակարճ միջոցի մէջ չինելու յաւելումական կառաւարմբարութեւ 2000 կառքեր, Քրամբի նաւաբանը այս օրերս աւարտեց «Մէծիւրէն» յաճախակին չինութիւնը, որ թերեւս ալ դէն թրքական ծովերուն մէջ է։ 24 մղոն ճամբայ առնող եւ 2200 ձիու շարժիչ զօրութիւն ու կրկնակի պտուտակ ունեցող եօթն հակա թօփիսանական արդէն ապրստուած են ձէնովայի Անաթոլիո գոտի մարտին, որ հոկտեմբերին պիտի յանձնէ զանոնք։

Սուլուիսին մարա 1 ին ստորադրած մէկ հրամանագրոյն համեմատ, շարժուն վիճակի մէջ դրուած է զօրաբանակ մը, որ Անդրինուպոլսեան նահանգին բազմազինական կետերը պիտի զօրացնէ։ Եւր զինուորներ կը հասնին անդադար Ձմեռնիային եւ կուղղուին դէպի Ալպանիա։ Վերջապէս մարտի և ին հրաման տրուեցաւ ծովային նախարարութեան շտապով համախմբել օսմանիսն ամէն ծովային զօրութիւնները, եւ զանոնք կազմաւորել որպէսզի կուրի պատրաստ գտնուին ի պահանջի հարկին։

Այս կարգադրութիւնները մեծ զարմացում կը պատճառեն Կ. Պօլսոյ գիւնապետական մարմինն։

Մանաւանդ որ հիմա տարակուսելի է Մակեդոնիոյ պուլկար յեղափոխականներուն ընդհանուր ներողութիւն չնորոգելը։ Դուռը նոյնպէս, զեռքան մը ըրած չէ ջնջելու համար այն արտակարգ կարգադրութիւնները որ ձեռք առնուած էին, երկու ամիս առաջ, Պուլկարիային եկած ապրանքներուն դէմ, որով ազատ փոխանակութիւնը դեռ կաշկանդուած է Պուլկարիոյ եւ Թուրքիոյ մէջ։

Ինչպէս կը տեսնուի Պ. Նայէվիչ «միակ թրքասէր պուլկարը» ինքզինքը վերջապէս յաղթական կարծելու լուրը պատճառներ չունի։ Ինչպէս դեռ համոզուած չէ Դրան տարօրինակ գիմարումի գործութեան, որ կրնայ աւելի ծանր կերպարանք առնուել, զայն ծածկող գերմանական գիւնապետութեան շնորհիւ։ Պուլկարական զինպանական գործակատարը կարող է բան մը ընել այն նոր պահանջները ներքին դէմ, զոր Թուրքիան ամեն օր կը յարուցանէ օտարներէ ոստիկան

անհունութիւն խնդրոյն մէջ եւ որոնք եւս աւելի կուշացնեն խաբէական վե- նորոգումներու գործադրութիւնը :

Ահա վերջին շուրքերը կը հաստատեն Դրան բուն գիտաբանութիւնը պետու- թեանց ծրագրոյն՝ ուստիկանութեան մասին , եւ միեւնոյն ժամանակ , ընդհատուած Պ . Նաչէվիչի բանակ- ցութեանց , որոնց համար սոճապարած էին կարծել թէ լինցած են :

ԼԵՈՒՕՐԵՆՆ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍՉՈՒՔԷ

ՐՈՒՍՉՈՒՔ, 29 փետր. 1934

Պատ. խմբագրութիւն «Իրաւունք Լրագրի վառնա

Տեղական եւ «բացարձակապէս անկախ» թերթին մէկ թիւին մէջ խմ- բագրական մը կարգացի , որ «ցաւա- ցարը» խորագրերը կը կրէ :

Խմբագիր պարոնը՝ իր այդ խմ- բագրականով՝ կը ներկայացնէր թիւի մը , որ «չնականորէն» կը քննադատէ ու կը խծթէ Բնագիտութիւնը , Հո- գաբանութիւնը , վարժարանը եւայլն : Այո՛ , իրաւ է . այդպիսի թիւեր՝ մեր մէջ եւ ամէն տեղ ալ կան , որոնք իրենց հայտնիքն եւ միմիայն անձնական ազտութեամբ կը քննադատեն խմբագր- ներ այն քննադատութիւնները , որոնք շատ անգամ կըլլան , եւ պէտք է որ միշտ ըլլան՝ յօգուտ յառաջդիմութեան : Իսկ ես այս թիւիցը վստասկար ու կործանարար չեմ գտնիր . վստասկար այս կարգիները աղէկ բան մը ունին որ , ինչ որ սրտերնին կայ ու ինչ որ մշտ- քերնին կը ծնի՝ անմիջապէս կը փոխեն դուրս , եւ հասարակութիւնը այդ հո- տած փոխուիքներէն շուտով ճանչնա- լով գիւրդէ՝ ալ կարեւորութիւն իսկ չի տար անոնց եւ չաղղութիւն անոնց ո եւ է մէկ խօսքն :

Բայց կան թիւեր , որոնք ոչ մի- այն վստասկար են , այլ եւ բարին բուն նշանակութեամբը անխնայ են :

ու ես հոս դանձրեմ ներկայացնելով մէկ անգ՝ պիտի խնդրէի յարգելի խմբագիր- ներէն որ բուն եւ լուրջ կերպով մաքսովն՝ ամենէն աւելի՝ այդ թիւի- բուն դէմ , եւ ամէն գնով չէզոքաց- նեն զանոնք :

Այս ըսած թիւիցն անոնք են , որ միշտ գաղտնիկ մարթով կը պարտին , ու այդ անմեղ մարթին տակ կը պա- հեն այն բոլոր մահացու թիւները , որ կարտադրուին իրենց ազտութեամբ ու գաղտնի հոգիներէն ու մտքերէն :

Ոսկրներուն մինչեւ ծուծը կեղծա- ւոր այս թիւիցն են որ , դեռ երէկ թուրք ոստիկանութեան հետ սակար- կութիւն կընէին յեղափոխական թիւ- թեր լոնցիներու , անոնց գործունէու- թիւնը շլատուելու համար եւ այսօր ե- լեր ասդին անդին բարոյականի շան քարոզներ կը կարգան ու յեղափոխու- թիւնը կը պաշտպանեն :

Հոգիներուն մինչեւ խորը սեւցած այս թիւիցն են որ միամիտ , խեղճ երի- տասարդներ կը խաբեն՝ խաղարանի նուրբ գաղտնիքներ գիտենք ու ան- պատճառ կը շահինք ըսելով եւ զա- նոնք՝ իրենց գիտցած գաղտնիքներով՝ ծանօթ խաղարաններու մէջ՝ ժող- մերկ թողնելէ վերջ իրենք միշտ իւ- դոս պատառով մը կը դառնան օգտու- լելով խաղարանին մի մասնաւոր օրէն քէն :

Հոգիով , սրտով ու մտքով , եւ մէկ խօսքով՝ ամբողջ էութեամբնին դժուար մը դարձած այս թիւիցն են որ խաղամոլութեամբ իրենց հօրը հարս- տութիւնը փճացնող երիտասարդներու խորհրդատու կըլլան ու կեղծ փոխա- նագիրներ պարտաւստելով միամիտ մար գերէ խոշոր գուժարներ կործնելու կե- նեն ու այսպէս տարիներով դատա- բաններու դռները միամիտներու հո- գին ու սիրտը հատցնել տալէ վերջ իրենց այդ խորհուրդները մտիկ ընող խեղճներուն ալ բանտարկութեանը պատ- ճառ կը գտնան :

Ահա ասոնք վախճուելիք ու անար- կու թիւիք են . այո՛ , անա ասոնք են վախճուելիք ու անարկու անոր հա- մար որ ասոնք ցաւադարներու պէս իրենց մտքէն ու սրտէն անցած դուրս չեն նետեր , այլ ամէն վատութիւն ,

մատուցելու , դաւաճանութիւն եւ կեղծաւորութիւն կրնան , եւ այնպիսի փոքրատու վարպետութեամբ մը կընեն որ օձիկներն ալ միշտ օրէնքներ ձերան- ներէն կաղաւթեն :

Ասոնք են , այո՛ , վախճուելիքնե- րը եւ լուրջ մամուլին պատճին է լուրջ միջոցներ ձեռք առնել այս տեսակի թիւիցը չէզոքացնելու ու իրենց դժուար էութիւնը դառնուելի մարթէն դուրս հանելու համար : Ասիկա ժողո- վուրդին համար ճշմարիտ ծառայութիւն մը ըլլայ պիտի որուն վրայ դժբաղդա- բար պէտք եղածին պէս չէ խորհուած :

Մ Տ Ր Ա Կ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

— Գ —

Իտալական թերթերը Ռուսիոյ դէմ ծանր լեզու կը գործածեն : Այս պատ- ճառաւ Հոգմի ոստիկանապետը խմբա- գիրներու պատուիրած է մեղմել ի- րենց լեզուն , նկատել տալով թէ Ռու- սիոյ հակառակորդ երեւալու մէջ շահ մը չունին . բայց խմբագիր մը յայտա- բարած է ոստիկանապետին թէ՛ այդ տեսակ յանձնարարութեան մը պար- տաւոր չէ հետեւիլ , ցորչափ իտալա- կան մամուլը ուստիկանին նման ճըն- չիչ օրէնքներու չեն խաղաղուի :

Ռուսիոյ մէջ հարեւոյստեղական ցոյցերը արդիւնեցած . որովհետեւ շատ անգամ այդ ցոյցերուն նախա- ձեռնարկ կըլլան եղեր գինեմներ , հան- րակներ եւ ստահակներ , որոնք հայ- րենասիրական գիմակին տակ կը հա- մարձակին գողութիւններ եւ սրկա- յութիւններ ընելու :

Դիւլիէ կը գրեն թէ՛ պատերազմի թաւաւաւալը զրկուած ԿՍՍ բժիշկ- ներէն 700 ը հրէսներ էին , որոնց ըն- տանքները ըստ օրինի՝ ընտանիքի պիտին բացակայութեանը պիտի ար- տաքսուէին քաղաքէն : Բայց այս ա- նարկար օրէնքին գործադրութեան վրայ յառաջ եկած ընդհանուր յուզու- մին հետեւանօք , կառավարչապետը թոյլադրած է այդ հրէայ ընտանիքնե-

րուն մնալ նոյն քաղաքին մէջ , միայն անոնց ազգականները պարտաւորուած են հեռանալ :

Բեյրութի Պոլիտիկէ կը գրեն թէ՛ ըն- կերվարական յեղափոխականներ իրենց գործունէութիւնը կրկնապատկած են հրաաարակելով թուրքիկ թերթեր . եւ յայտարարութիւններ գինեոտրականու- թեան եւ կառավարութեան հակառակ : Ամէն օր հարեւոյստեղներ կը ձեռքա- կալուին ու կը բանտարկուին զլիսա- ւոր քաղաքներու մէջ :

ԱԶԳԱՅԻՆ

ՊՈԼՍՈՅ Պատրիարքը անցեալ շաբթու երկու անգամ ելլալով պալատը գացած է Պատրիարքա- րանի գործակաւարին հետ :

ԵՒԵՍԻՈՅ Նիզիպ գիւղի Հայոց դաւանափոխութեան խնդիրը կարգադրուած է վիճակին Ա- ռաջնորդ Տ. Անանիա վ. ի այ- ցելութեամբը :

Ֆիլիպիէ Տ. Տաճատ քհնյ. Դեր- ձակեան գիր մը գրելով Պատ- րիարքարան Պուրկաղի թաղ. Խորհրդոյ կողմէ իրեն գէմ եղած ամբաստանութեանց համար կը բողոքէ եղեր , եւ կը պահանջէ որ իրեն արտօնութիւն տրուի կամ դատ բանալու եւ կամ քննիչ յանձնախմբի մը միջոցաւ քննու- թիւն կատարելու :

ՐՈՄԱՆԻ (Ռուսմանիա) Հայոց ե- կեղեցւոյն Հոգաբարձութիւնը տեղւոյն հայ վարժարանը փա- կեր եւ չէնքը թղթատարական վարչութեան վարձու տուել է : Որչափ գիտենք այդ քաղաքի Հայոց աղբային կալուածներու եկամուտը վարժարանին ծախքը գոցելու բաւական էր :

ՏՓՂԻՍԻ Հայոց Թատերական ըն-

ԱՐՄԷՆ ԵՐՏԱՆԵԱՆ (13)

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

(Կաղանդի նորավէպ)

— Տեսած ես . . . բայց արեւններու մէջ ծածկու- ած էր Ասիկա Հայաստանն է ու անոր դրախտի աշխարհքը . . . Ո՛րք են . . . ի՞նչու խոտվութիւն չկայ հոն : Կը տեսնե՞ս ի՞նչ գմայլելի կարգ ու սար- քերով կը կառավարուի անոր ժողովուրդը : Զրկայ այդ ազգին պէս աշխատասէր ու յառաջդիմելու ըն- դունակ ազգ մը . . . անոր քրտինքը մեղր ու իւղէ , կըսեն : Դուն տարիներէ ի վեր միլիոնաւոր անհատ- ներ ջարդեցիր , քաղաքներ աւերեցիր , գիւղեր այ- րեցիր ու կարծեցիր թէ արմատախիլ ըրած եղար այդ ազգը . . . ամենեւին . . . շատ խաբուած էիր . անա՛ չորս միլիոնէն աւելի են այդ ազգին հասններն սե- քիչ ատենուան մէջ կը բազմապատկուին . . .

Ուստի Համիտ կը դողար : Հոգիկան սոսկա- լի ցաւ մը կը ճնշէր գլխը :

— Նայեցար . . . հարցուց մուրացկանը :

— Օ՛հ . . . նայեցա՛յ . . . նայեցա՛յ . . . բացա- զանչեց Սուլթան Համիտ :

— Աղէ՛կ . . . միմիայն մուրացկանն ու յանկարծ լուսաւորեց նշմարանն , որ առջի պէս ամեն բան ցոյց կուտար :

— Նշմարանն ենք , անանկ չէ՞ :

— Հարկա՛ւ . Այժմ ուշադիր եղի՛ր :

Ու գործիքը դարձնելով՝ մուրացկանը պատկե- րացուց , Սուլթանի ներկայացուցներու յատուկ դի- ւանատունը :

— Ո՛վ են այդ երեւո թագաւիր անձերը . . . հար- ցուց մուրացկանը :

— Չեմ ճանչեր . . . կակաղեց Սուլթան Համիտ :

— Ծանչէ՛ . . . անա մին Հայաստանի թագաւորն է , իսկ միւսը՝ Մակեդոնիոյ . . . Տե՛ս , ինչպէ՛ս յարգանքով մը պիտի վարուիս անոնց հետ . . . Ինչ- պէ՛ս կը խօսիս , կը շաղակրատես , կը ժպտիս ու գոհունակութեան նշաններ ցոյց կուտաս . . .

Սուլթան Համիտ չը կրնարով ինքզինքը զսպել՝ կեցած տեղը ծռեցաւ ինկաւ ու սկսաւ գալարուել սատկելու մօտ օձու մը պէս :

— Արթնցի՛ր . . . ա՛լ ասիկա վերջին նկարս է . . . քաջ եղար ու դիմացար . . . նորէն քաջ եղիր ու դիմացի՛ր . . . կըսեն թէ՛ գազաններու գազանը շու- տով չընկճուիր , պոռաց մուրացկանը :

Սուլթան Համիտ աչքը բացաւ ու նայեցաւ . . . Իր պալատին սենեակներէն մէկուն մէջ կը գտնուէր ան ու քովը կեցած էին երկու հակայ պա- հակներ : Զավազանց փոխուած էր ու բնա՛ւ մարդ- կային կերպարանք մը չէր մնացեր վրան : Բազմոցի մը մէկ անկիւնը կծկաւուած էր ու աչքը թարթելու կը վախնար : Դունե՛ք մը կը նայէին Վիւզէրայ կոչ- ուած աւադանիներն ու ծիծաղելով կը մեկնէին : Ահա՛ երկու բժիշկ ներս մտան : Ինքը սարսափով մը ռաքի ելաւ ու սկսաւ պոռալ ու շուռի մը պէս ոռնալ . . . պահակներու ձեռքը խաղաղանքի կա-

յին , ատոնցմով հարուած հարուածի ետեւէն կիջե- ցունէին իր մարմնոյն վրայ . . . վերջապէս քաշ- կուելով իր շինած նկուղը տարին գինքը . . . Դա- հի՛ծ մը դրաւ անոր գլուխը կոճղին վրայ ու պիտի կտրէր . . . անա՛ ,

Ծիչ մը արձակեց Սուլթան Համիտ ի տես այդ դարհուրելի ոճիւրն :

Բայց մուրացկանը գոչեց .

— Սո՛ւս . . . եթէ ո՛չ գլուխդ կերթայ : Ա՛լ վերջացան ուրուանկարներս : Ես կը մեկնիմ . . .

— Կեցի՛ր . . . կեցի՛ր . . . ճչեց Սուլթան Հա- միտ ու այդ քստմնիկ ձայնէն սթափած՝ աչքերը փացաւ :

Աւտու եղած էր . . .

Պալատը ճառագայթներու մէջ էր :

Չ.

. . . Ու Սուլթան Համիտ—այն որ կարմիր- փաղան կոչուած է ,— հասկնալով որ այդ գիշերը քրիստոնեաներու նոր-տարին էր , ուխտեց անկից հտքը միշտ նոր-տարի գիշերը չը քնանալ , որ- պէսզի գերծ մնայ ծաղկաւորութեան Երազներէ . . .

կերութիւնը այս տարի 7000
բուսկի բաց ունեցած է :

ՎԱՌՆԱՅԻ Աղքատականամբ ըն-
կերութեան մէկ անդամը կը
հարցնէ թէ՛ ըստ կանոնադրու-
թեան վեց ամիսը անցած ըլլա-
յով հանգերձ ինչո՞ւ Բնդհանուր
Ժողով չի գումարուիր :

Նոյն ընկերութեան Գործ-
ժողովը մէկ անգամէն մեր ստա-
ցած տեղեկութեանց համեմատ,
կարելի պիտի ըլլայ 15 օրէն
հաշիւները ամբողջացնել և Բնդհ-
ժողովը գումարել : Յարգ. յետա-
ձգուելուն պատճառ եղած է ի
նպաստ ընկերութեան տրուած
պարահանգէսին զբաղմանց ծախ-
րութիւնը :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ք Ի Ա

Սուլթանըն սէր խաֆիյէսի
ատտ օլընան պաշ կալէր Ահմէտ
ճէլալէտտին բաշանըն Մըըրա
զաշմըն օլտըղընը եզվէլճէ ետղ-
մըն ըտղգ : Մէրգում Գահիրէտէն
պա թէլէկրաֆ թիւրք սէրաս-
քէրինէ իսթաֆասընը պիտի
միշ վէ իլալէթէն իյզահաթ
վէրմիշ տիր քի՛ եալէրիք մէս-
լէքինտէն վէ ասքէրիէ բուլպէ-
լէրինտէն իսթիֆա իթմէսինին
սէպէպի՛ պէօյիւք զապիլէր
հագսըղ թէլգըֆաթ վէ թահար-
րիաթա ալէաթ իտիլմէքտէ
օլտըղլարընտան՝ զայրը քէնտի-
սինէ նէֆրէթ կէլմիշ օլուպ ,
սիւքի ասքէրիյէտէն չեքիլմէյի
միւրատճահ ատտ իթմիշ :

Մէրգում բաշա իլէ Գէլէկեան
Տիգրան էֆ . տախի Մըըրա
գաշմըն տըր : Պունլարըն ֆիրա-
ըը իւզէրինէ եհնի վէ սապըգ
նաղըրլարտան պիւր թագըմը
նէզարէթ ալթընա ալընմըշլար :

— Սթանպուլտան Վիէննա կա-
ղէթալարընա վէրիլէն թէլէկրա-
ֆա պինաէն , Սասուն տաղլարը-
նա չէքիլմիշ օլան էրիէնիլէր
իւզէրինէ 16 թապուր բիյատէ
վէ 2 ալայ թօրճը կէօնտէրիլմէ-
սի էմր օլընմըշ տըր :

— Սախթէ նիշանլար իմալ իթ-
տիրուպ սաթմագտա օլան թա-
յիւր պէյ վէ բէֆէգասընըն մու-
հաքէմէսինին գարարը օգունտու
« Սէրվէթ » վէ « Մալիւմաթ » կաղէ-
թալարըն սահիպի իմթիաղը թա
յիւր պէյ իքի զապիլթ վէ իքի
հիւքիլմէթ մէմուըը 15 սէնէ
զընտան մահպուսիյէթինէ մահ-
քիւմ օլտուլար : քէզա տօք
լարիստով պիւր սէնէ մահպուսի-
յէթէ իքի Աստորիա թապալը
լար պէրաաթ իթտիլէր . տի-
կէր պիւր Աստորիալը վէ պիւր
Մաճար մուհաքէմէտէ : պուլըն-
մատըլար : Փագաթ պալատէքի

մահքիւմ օլանլար հիւքիւ իսթի-
նաֆ իթմիշլէր տիր :

Հիլէքեարըղը իլէ մարուֆ
մէրգում թայիր պէյ հուզուրը
մահքէմէտէ քէլամա աղաղլէ շիւմ
տիյէ գատար զաթը շահանէյի
սէտագաթլէ շալըշտըղը կիպի
պունտան սօնրա տախի շալըշա-
ճաղընը վէ սախթէ նիշանլարըն
մէսէլէսինտէ ասլա խապէրի օլ-
մատըղընը վէ պա խուսուս քէն-
տիսի ֆրանսըզա պիլմէյուպ՝
« Սէրվէթ » կաղէթալը Մինաս
էֆէնտինին թահլթը իտարէսին-
տէ պուլընտըղընը պէյան իթտի-
Մինաս էֆ . իսէ՛ քէնտիսինէ
իլպար օլընան նիշան հալատիս-
լէրի տիկէր հալատիսլէր կիպի
կաղէթալա տէրճ իթմէքտէ օլ-
տըղընը վէ օլ հալատիսլէրին
սախթէ օլաճաղընա ասլա չեքէ
իտէմէտիկինի արգ իթտի :

Շահիտէրտէն պիւրիսի՛ մախ-
տուըն Սէրվէթին իտարէսինէ-
սինտէ շալըշտըղընտան պիւր կիւն
պունըն պիւր նիշանլէ էվէ կէլ-
միշ օլտըղընը սէօյլէյուպ , քէն-
տիսի տախի էրթէսի կիւն թա-
յիւր պէյէ կիտուպ պիւր նշան իս-
թէտիկինիլէ օ տախի չէքմէ-
ճէտէն չըգարուպ քէնտիսինէ
պիւր թանէ վէրմիշ օլտըղընը
շահատէթ իթմիշ տիր :

Սէլքիւր նիշանլար սաթմագ
իչիւն տէրթ Աստորիալըլար վա-
սիլթա օլուրլար ըմըշ . պունլար-
տան պիւրիսի տօք . խիստով
ախիլէն թիւրք թապալատը օլ-
մուշ ըտը վէ պիւր սէնէ մահպու-
սիյէթէ մահքիւմ իտիլար . տի-
կէր իւչիւ պէրաաթ իթտիլէր :

— Մաքէթնիա ժանտարմա-
սընըն թէլքիլի իչիւն էլիլէր
Պապը Ալի պէյնինտէ հասըլ օ-
լան իսթիլտիֆ հալլ օլընմըշ ի-
սէտէ նէ չարթլալէ ուզլաշըլտը-
ղը մէճհուլ տըր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Ճարօն ամիրալը թօկօնըն բա-
բօրթը վէ Բարիկ էլիսինին բէս
մի իլանաթը մարտ 10 տա վու-
գու պուլան տէնիլ գալկասըն-
տան վէ Բօրթ Արթուրըն թօբա
թութուլմասընտան շէօյլէ մա-
լիւմաթ վէրմիշ տիրլէր :

— Ճարօն տօնանմասընըն պիւր
գըսմը 6 ատէտ Բուս թօրթիլ
վաբօրլարընա թէսատիֆ իտէր
վէ եարմ սաաթ միւսատէմէ-
տէն սօնրա՝ Բուս վաբօրլարըն
պիւր գաշը գաղանլարտան վէ
տիկէրլէրի պաշգա եհլէրինտէն
խասարաթտէ օլուպ գալմայա
մէճպուր օլուրլար : Ճարօն վա-
բօրլարը տախի խասարաթա ուղ-
ըտը իտէտէ՝ մուհարէպէյէ տէ-
վամ իտէպիլիւր հալտէ իմիշլէր :
« Ճարօն տօնանմասընըն տիկէր
պիւր գըսմը տախի 2 Բուս թօրթի
լէօրլէր իլէ վուրուշուր . պուն-

լարտան պիւրի գաշար վէ տիկէ-
րի պաթար :

» Սօնրա Ճարօն գուլվէթլէրի
պիւրլէշուպ 4 սաաթ Բօրթ Ար-
թուրը թօբա թուլթարլարճարօն
վաբօրլարը հիշ պիւր գարար
կէօրմէղլէր-պիւր Բուս վաբօրը տէ
լինուպ իւչիւնճի հիւճումտա
զարգ օլուր :

« Սօնրա ճարօն վաբօրլարը թա-
լիէն Վանա տօղրու կիտուպ Սան
սան— թանա ատաւընըն իթթի-
սալընտա պուլընան Բուս « պինա-
լարըն » երգարլար :

— Պիւր բէվալէթէ կէօլէ , Բուս
լարը քէնտիլէրի 4 էսկի վաբօր
լար Բօրթ Արթուրը պօղաղընտա
պաթըրուպ , եօլու գաբամըշլար :

— Չիֆուտան պիւրիսիլիտիկի
իւզէ , 20 Ջինի ճարօնըլար
իշարէթ վէ տիքլէրի էսնատէ
Բուսլարտան թուլթուլմուշլար :

— Բօրթ Արթուրտան բէլէլէս-
պուկա վէրիլէն թէլէկրաֆ իւզ-
րէ մալա 15 տէ մէղքիւր շէհիւր
սիւքիլէնէթլի պիւր հալտէ իմիշ :
Փագաթ շէհիւր եհնի գըսմը
եանմըշ վէ էհալի գաշմըշ օլ-
աղը միւրէվլի տիր :

— Ֆրանսըղ վէ Ալման Գըրմըղը
Խաշ շիւքէթլէրին Բուս եարէլի-
լէրինի թէտալի իթմէք թէք-
լիֆլէրինի Չաւ գապուլ իթմիշ
տիր :

— Գօլէա իմրէլաթօրը հէրնէ
գատար ճարօն իլէ ահտիմէ իմ
զալամըշ իտէտէ՝ թէքըար Բու-
սիա իլէ միւնասէպաթտա պու-
լընտըղը Սէուլտան « թալըղա »
պիւրիսիլիտիլ տիր :

— Ճարօնըլար Գօլէալը պիւր
նէվ զապիլ իթտիքլէրի կիպի՝
Գօլէալը մէմուրլարըն եհլէրինէ
ճարօնըլար թային իտէյօլլար :

Մ Ի Թ Է Ն Է Վ Ի Թ Է

Օտէսա տարիլֆինտընտա [Հա-
մալարան] իւլիթլալէ պէ պիւր պօմպա
աթմըշլարը՝ իւլիթլալէ պիւր պօմպա
եարէլէնմիշ : Բօլիս տէրալ եէթիշուպ
անլէրի թուլթուշ իտէտէ , տիկէր
թալէպէլէր ճէպրէլանլէրի բօլիսլէ-
րին էլինտէն գուրթարուպ սաղլա-
մըշլար : Հիւքիւմէթ միւրիլմէլէրի ա-
րամագտա վէ հիւզլէրճէ քէսան տէր-
տէսթ իթմէքտէֆտիլ :

— Գիւլիլի Տալիսիլմըն մուլպիլի
Ֆէս ճիւղարընտա կէղինտիկի էսնատէ
զալպ օլմուշ : Պէրպէլէր անըճ գաթ
լիթմիշ զանն օլընըրը :

— Իմրէլաթօր Վիլիլէլմ Պահըր Սէ-
ֆիտաթ [Միշիկըրական ծով] սէյահա-
թա չըգմիշ օլուպ , պու միւնասիպէթ-
լէ Ֆրանսա ճուլթուրիլէթ բէլիսի Մ.
Լուպէ իլէ սախի կէօրիւլէճէ քէլմիշ :

— Պէրլինտէ պիւր զապիլթ , զէվճէսի,
19 եալընտա պիւր գըղը վէ իքի էրքէկ
էվալտարը զէհիլէ թէլֆի նէֆա իթ-
տիլէր . իշուլէ էմալըզ ճիւնալթ
միւսըրիֆիլթ վէ ճիւղրուրլապ իտէպի
իլէ իճրա օլընմըշ տըր . Իքի՝ չօճուգ-
լար պիւրլէլէրէք զէհիլի իշմիշլէր ,
ֆագաթ վալտէն վէ գըղ մալսուս
զէհիլէլէնմիշ տիրլէր :

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Բ Ա Ռ Ս Ր Ա Ն

ՊՈՒԼԿԱՐԵՆԷ-ՀԱՅԵՐԷՆԷ-ՏԱՃԿԵՐԷՆ

Կը բաղկանայ 592 շերտերէ , պա-
րունակելով մօտ 30,000 բառեր : Ըն-
տիր թուղթ . մալուր . սպարուքիւն :

Սկիզբը , բացի Յառաջաբանէն , ունի
քերականական կարեւոր Գիտելիքնե-
րու և կանոններու ամփոփումը (40
երեսի չափ) : Մէկ խօսքով բառարան
մը՝ որ իւր պարունակութեամբը , եւ
իւր շափաւոր գնովի ամենէն յարմար
օժանդակը կը հանդիսանայ պուլիս-
րերէն լեզուն սորվելի փափաքող ամեն
զասակարգի մարդոց , թէ՛ ուսանողին ,
թէ՛ վաճառականին եւ թէ պարզ ար-
հեստաւորին :

Գ Ի Ն Ե Յ Գ Ի Ա Ն Ք

Դիմել հեղինակին

ԱՍԱՏՈՒՐ ՄԿԻՏԻՉԵԱՆ—ՍՕՍԻԱ

Յ . Գ . — Թէպէտ խոստացուած էր
որ բաժանորդք բառարանը պիտի ստա-
նան փետրուարի մէջ , բայց Գիտելի-
քական Գիտելիքներու յաւելումը եւ
անոր տպագրութիւնը ուշացուցին այդ
թուականը : Երկուշաբթիէն սկսեալ
հետզհետէ պիտի զրկենք անոնց բա-
ռարանները :

Թ Ի Ի Ճ Ճ Ա Ր Թ Է

ՎԱՌՆԱ, 6 Մարտ

ՋՍԻՒԻԷ

ՊՈՒԼԿԱՅ
Վալիս 54-59 լիպ. 9-11/11-40
Արապա 52-60 լիպ. 8-80/11-60

ԱՐԻԱ,
Վալիս 100 քիւ 8.80/9.10
Արապա 42-45 լիպ. 5 / 5-10
ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լպ. 4,20/4,60
Վալիս 100 քիւ 10-20/10-50
ՅԱՍՈՒԼԱՅ, 100 քիւ 15/16-
Արապա 100 քիւ 14-16
ՏԱՐԸ արապա 57/59 5.80 6.00
ԴՕԼՕՁ արապա 8-80/10-40
ՄԻՍԻՐ Վալիս 7/7-0.95
ՋԱՎՏԱՐ արապա 6.60-7.20
« Վալիս 6.40/6.90

Գիւնտէ 80 —90 Վալիս վէ 50-60
արապա կէլմէքտէ Վալիս մուլմէլէսի
նարօլէն 20 ֆր. արապա մուլմէլէսի
նարօլէն 20.80:

ՍՍԱՐԱՅԻԹԷ

Նարդէն 20, 60 ֆրանք
Օսմ. լիբարը 22, 90 ալթուր ֆրանք
ՊԱՊԱԼԻԹԷ

Վարնա բիւցասընտա պագալիյ
յալլէրին պու կիւնի ֆիյաթը , ալթու
ֆրանք իլէ :

ԳԱՀՎԷ 1,90/2,10
ՇԷՔԷՐ Նէմցէ 60
ՇԷՔԷՐ [քէսմէ] սանտրդ 31,50
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուվալը 39, —
» Ճարօն » 38,
» Իսկիլիք » 27—
» Բիլզն » 54 ֆր.
ԿԱՁ սանտրդ 11-10
ՉԷՑԻՐ Եաղը քիւ 80-90
ԵՈՒՄՈՒՐԻԱ 100 ատէտ 4,20-60
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ 26

Одговорникъ А. Курбетянъ

печатница "Взаимность" — Варна.